Ռուս վինվորը ավերիների կոհ դարձավ

Երեկ, ուրբաթ օրը, զինված ընդհարում տեղի ունեցավ, մի կողմից ՆԳՄ ջոկատների եւ ԼՂԻՄ-ի արտակարգ շրջանի պարեւտատան ուժերի եւ մյուս կողմից Ադրբեջանի ՕՄՈՆ-ի միջեւ, հաղորդում է ԼՂԻՄ-ի ՆԳՄ վարչությունը: Սկզբում, ըստ հասած տեղեկությունների, Ադրբեջանի Միրբաշիրի շրջանի Ղաֆանլը գյուղի կողմից ադրբեջանցիների զինված խումբը գրնդակոծել է ԽՍՀՄ ՆԳՄ զինվորական այն պահակախումբը, որ պաշտպանում էր Մարտակերտի շրջանի Սեյսուլան հայկական գյուղի դաշտում աշխատող մարդկանց: Գնդակոծության ժամանակ մահացու վիրավորվեց ՆԳՄ շարքային Անատոլի Պակշինը, որը մահացավ հիվանդանոց տանելու ճանապարհին: Պատահարի վայրը մեկնած օպերատիվ խումբը նույնպես գնդակոծվեց վերը հիշված Ղաֆանլը գյուղում դարանակալած օմոնականների եւ զինյալ ադրբեջանցիների կողմից:

«ԻՖ»-ի թղթակիցը տեղի ունեցած գրնդակոծումները բնութագրեց իբրեւ իսկական մարտ: Զոհերի մասին տվյալներ դեռ չեն ստացվել:

Միաժամանակ, Ադրբեջանի ՊԱԿ-ը հաղորդում է, թե վերջին երկու օրերին Հայաստանի տարածքից իրագործվում են խմբային հարձակումներ Լաչինի շրջանի վրա: Գորիսի շրջանի կողմից մի խումբ, ավտոմեքենայով մոտեցել է վերին Զիջինգի գյուղին եւ գնդակոծել այն: Մի այլ խումբ Գյուլյաբիդ գյուղում փորձել է պատանդ վերցնել տեղի հովվին եւ քշել հանրային հոտը: Հովիվը կարողացել է թաքնվել իսկ զինծառայողները վերադարձել են հոտը:□